Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2023 թվականի հուլիսի 11-ից 14-ը

Ղրղզական Հանրապետություն (ք. Բիշքեկ, «Տորուգարտ» անցումային կետ)

գործուղման արդյունքների մասին

1" Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Ստեփան Ստեփանյան ՀՀ ՊԵԿ ՄՀՎ մաքսային գործառնությունների կազմակերպման և հսկողության բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ղրղզական Հանրապետություն, քաղաքներ Բիշքեկ, Նարին, «Տորուգարտ» անցումային կետ 11.07.2023-14.07.2023թթ.

3" Հրավիրող կողմը՝

Ղրղզական Հանրապետություն

4" Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝

Ղրղզական Հանրապետության կողմից 29.05.2014թ. ԵԱՏՄ պայմանագրին միանալու կապակցությամբ արդյունավետ մաքսային հսկողություն իրականացնելու համար անցումային բոլոր կետերի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության անհրաժեշտ պայմանների ապահովման պարտավորության կատարման ուսումնասիրություն:

5" Քննարկված թեմաները՝

Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության «Տորուգարտ» անցումային կետի կահավորվածության և նյութատեխնիկական հագեցվածության ուսումնասիրություն:

6"Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Աշխատանքային խմբի կողմից այցելություն է իրականացվել Ղրղզական Հանրապետության և ՉԺՀ պետական սահմանին գտնվող, Ղրղզական

Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության ավտոմոբիլային՝ «Տորուգարտ» անցումային կետ: Ուսումնասիրության ընթացքում իրականացված այցելության արդյունքում պարզվել է, որ Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության կողմից իրականացվել են բոլոր անհրաժեշտ միջոցառումները վերը նշված անցումային կետը մաքսային հսկողության համար անհրաժեշտ սարքավորումներով և տեխնիկական միջոցներով ապահովելու, անձնակազմի կողմից դրանք պրակտիկայում կիրառման համար:

7" Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Ուսումնասիրության ավարտից հետո 13.07.2023թ. Բիշքեկ քաղաքում, Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայության վարչական շենքում կազմվել է հաշվետվություն իրականացված մոնիտորինգի վերաբերյալ, որտեղ «Տորուգարտ» անցումային կետի մասով նշվել են իրականացված գործողությունները: Հաշվետվությունը ստորագրվել է աշխատանքային խմբի բոլոր մասնակիցների կողմից:

8" Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Ղրղզական Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային ծառայությանը առաջարկվել է ամեն տարվա կտրվածքով իրականացնել անցումային կետերում գործող մաքսային հսկողության սարքավորումների պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերը, դրանք աշխատանքային վիճակում պահելու հետ կապված տեխնիկական սպասարկումը, ապահովել անձնակազմի մասնագիտական պատշաճ մակարդակի հետագա աճը և որակավորման բարձրացումը:

9" Ստորագրությունը, ամսաթիվը

18.07.2023թ.